Funded by the European Union

Մասնակիցների կանչ

COVID-19. Քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն

Արագ արձագանքման աջակցություն անկախ լրատվամիջոցներին

ՄԵՐ ՄԱՍԻՆ.
«COVID-19. Քաղաքացիական հասարակության ճկունություն և կայունություն» ծրագիրը տարածաշրջանային ծրագիր է, որն իրականացվում է **Մարդու իրավունքների տուն Երևանի** կողմից՝ **«Հավասար իրավունքներ և անկախ մեդիա» ֆրանսիական ոչ առևտրային կազմակերպության** (ERIM) հետ համատեղ՝ **Եվրոպական Միության ֆինանսավորմամբ**: Ծրագրի նպատակն է աջակցել քաղաքացիական հասարակության կազմակերպություններին, անկախ ակտիվիստներին և անկախ լրատվամիջոցներին՝ շարունակելու իրենց գործունեությունը COVID-19-ի համաճարակի ընթացքում և դրանից հետո:

Մենք փնտրում ենք **անկախ լրատվամիջոցների**, որոնք տուժել են համաճարակից և որոնք աջակցության կարիք ունեն՝ իրենց աշխատանքը շարունակելու և այն արդյունավետորեն կազմակերպելու համար:

ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԸ.

Դրամաշնորհները տրամադրվում են COVID-19-ի համաճարակից ազդված անկախ լրատվամիջոցներին, **որոնք զբաղված են փաստերի ստուգմամբ և հակազդող պատումների ներկայացմամբ**:

> **Արագ արձագանքման ինստիտուցիոնալ աջակցություն լրատվամիջոցներին՝ մինչև 10,000 եվրո՝ մարզային և մինչև 19,000 Եվրո՝** համապետական լրատվամիջոցներին: Դրամաշնորհը տրամադրվում է հետևյալ գործողությունների իրականացման համար՝ չսահմանափակվելով դրանցով.
> - ընթացիկ ծախսեր (օրինակ՝ աշխատավարձ, գրասենյակի վարձակալություն, գրասենյակային ծախսեր, անվտանգությանն առնչվող ծախսեր և այլն),
> - հատուկ գործողությունների իրականացման համար աջակցություն՝ ի հակազդեցություն ճգնաժամին (օրինակ՝ համաճարակի ընթացքում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկում, համաճարակից ազդված՝ խոցելի խմբերին օգնելուն ուղղված գործողություններ),
> - ճգնաժամին հակազդելու և գործողությունների պլան մշակելու համար խոհրդատվությունների և մասնագիտական խորհրդատվության համար դիմումներ:

Բոլոր դրամաշնորհներով առավելապես խրախուսվում են մարզերից ստացված հայտադիմումները՝ նախապատվությունը տալով այն կազմակերպություններին, որոնք նախկինում սույն աղբյուրից աջակցություն չեն ստացել:
Քաղաքական և կրոնական կազմակերպությունների հայտադիմումները քննարկման ենթակա չեն:

Աջակցությունը կարող է տրամադրվել մինչև 24 ամիս ժամկետով:

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Հավասար իրավունքներ և անկախ մերդիա» ֆրանսիական կազմակերպությունն ու Մարդու իրավունքների տուն Երևանը, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:

Funded by the European Union

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ.

Մասնակիցները պետք է ներկայացնեն համապատասխան հայտադիմումի ձևը հայերեն՝ info@hrhyerevan.org էլ. փոստի հասցեով՝ «Վերնագիր» հատվածում նշելով. **Ապատեղեկատվությանը հակազդելու արագ արձագանքման դրամաշնորհներ:**

Հայտադիմումները պետք է ներկայացվեն մինչև **2022 թ. մարտի 23-ը:**

Դրամաշնորհներին դիմելու հայտադիմումի ձևը կարող եք գտնել հետևյալ հղմամբ:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ.

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կարդալ «Մասնակիցների ուղեցույցը»:

Սույն փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու են «Հավասար իրավունքներ և անկախ մերդիա» ֆրանսիական կազմակերպությունն ու Մարդու իրավունքների տուն Երևանը, և այն կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը: